Ստորոգյալի լրիվ կամ մասնակի զեղչումը և կետադրումը

Դասարան՝ IX

Դպրոց՝ Հ. 75 հիմնական

Առարկա՝ հայոց լեզու

Ուսուցչուհի՝ Ն. Զեյնալյան

Զեղչումը ոճական երևույթ է, որի ժամանակ խոսքը պատկերավոր դարձնելու համար այս կամ այն բառը չենք օգտագործում: Նախադասության մեջ որևէ բաղադրիչի բացթողումը, որը կռահելի է, հասկանալի է, վերականգնելի է կոչվում է զեղչում: Բանավոր խոսքում զեղչումը սովորաբար արտահայտվում է հնչերանգով, որը գրավոր խոսքում արտահայտվում է կետադրությամբ:

Ենթական սովորաբար զեղչվում է, եթե նրա ենթական արտահայտված է առաջին և երկրորդ դեմքով: Օրինակ- Ես կարդում էի ձեր աշխատանքները:

Բարդ համադասական նախադասության ստորոգյալը կարող է զեղչվել ամբողջովին կամ մասամբ

Մասամբ զեղչվում են թե՛ պարզ, թե՛ բաղադրյալ ստորոգյալները:

Օրինակ՝

ա/ Քամին ուժգնանում է, ծովը՝ փոթորկվում:

*(զեղչվել է **Է** օժանդակ բայը)*

բ/ Քույրս խելացի է, եղբայրս՝ ճարպիկ:

(զեղչվել է բաղադրյալ ստորոգյալի հանգույցը)

Ամբողջովին զեղչվում է պարզ ստորոգյալը:

Օրինակ՝

Մայրը ամեն առավոտ շտապում է գործի, քույրը՝ համալսարան:
(զեղչվել է **շտապում է** ստորոգյալը)

Ամբողջովին կամ մասամբ զեղչված ստորոգյալի փոխարեն դրվում է բութ։

Օրինակ՝

ա/ Տանտերը մի դռնից ներս մտավ, մենք՝ մյուս։

բ/ Մեղուն ծաղկից մեղր է հավաքում, իսկ օձը՝ թույն։

գ/ Եղբայրս Անիի ավերակները տեսել է, իսկ ես՝ ոչ։

Գլխավոր և երկրորդական նախադասություններ կապակցող շաղկապներից բութ նշանակվում է միայն որ, թե, եթե, ինչ շաղկապների և երբ շաղկապական բառի զեղչման դեպքում:

Օրինակ՝

ա/ Տարիներ են անցել, բայց թվում է՝ ոչինչ չի փոխվել:
բ/ Ես չգիտեմ՝ ինչ է կատարվել:

Եթե համադաս նախադասությունների ենթակաները տարբեր են, ապա զեղչված օժանդակ բայի փոխարեն դրվում է բութ:

Օրինակ՝
Հայրը բարկանում է, մայրը՝ պաշտպանում:

Նույն ենթակայի դեպքում պարզ ստորոգյալը մասամբ զեղչելիս չի տրոհվում:

Օրինակ՝
Ցերեկն աշխատում էր, երեկոները այցելում ընկերոջը: